



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՍԵՐԻԱ «ԱՌՈՂՋ ԿԵՆՑՄՂ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»

Ս. Ա. ԲԱԽՄՈՒՏՅԱՆ

**ՊՆԴԵՐԵՍ  
ԲՆԱԿԻԶՆԵՐ**

4-րդ հրատարակությունից բարգձմանց 2. Մ. 2.

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ИСТОРИИ Д.Н.  
Благодетель Нальч  
СССР

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.  
Цена 10 коп.

614.4

բ-21

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՆՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»

1982

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

614.4  
P-21

Ս. Ա. ԲԱՆՄՈՒԹՅԱՆ

Գրքային հավանություն և գտել գյուղացու կենտրոնական տանը ընթերցման ժամանակ

32-11  
CA 487

# ՊՆԴԵՐԵՍ ԲՆԱԿԻՉՆԵՐ

Թարգմ. Հ. Մ. Հ.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ  
ԻՆՏԵՆՍԻՎՆԱԿԱՆ  
ԿՈՆՍՏԱՆԴՆԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ՏԱՆԻ ԸՆԹԵՐՑՄԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԿՈՆՍՏԱՆԴՆԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ

Յերեվակայեցեք, վոր ձեր բնակարանն և մտել մի կողմնակի, ձեզ բոլորովին ոտար մի մարդ, ասենք կուլակ:

Առանց հարցնելու և առանց թույլտվության նա հաստատվում և այնտեղ: Նա բոլորովին հաշվի չի առնում, թե արդյոք դա բնակիչներին հաճելի չէ, թե վոչ, ընտրելով իրեն ըստ իր ճաշակի մի հանգիստ անկյուն:

Հաստատվելով այսպես, նա սկսում է այս ու այն կողմ ընկնել և գիշեր ու ցերեկ բնակիչներին անհանգստացնել: Յերեկը աշխատանքն է խանդարում, իսկ գիշերը քունը:

Բայց, դա յեւ դեւ բավական չէ: Նա բառիս բուն նշանակութեամբ, ձրիակեր է, նա չի աշխատում, բայց սնվում է, դարձյալ կամայականորեն ոգտվելով ձեր պաշարներից:

Վորոշ ժամանակից նա ընտանիքի տեր է դառնում, այն ել հնչպիսի բազմանդամ: Յեվ, քանի վոր «եննձորը իր ծառից հեռու չի ընկնի», նրա ընտանիքն ել, ծնողի պես լրբորեն է իրեն պահում: Այն ժամանակ ել դրանցից ապրուստ չես ունենար:

Ի՞նչ կանեյիք, յեթե ձեզ մի այդպիսի դժբախտություն պատահեր:

27.02.2013

3800

Պարզ է, դուք կաշխատելիք այդպիսի բնակիչներին  
ազատվել: Նախ, կփորձեյինք այդ ձեր ուժերով անել,  
իսկ յեթե բան դուրս չգար, այն ժամանակ գյուղխոր-  
հուրդ կամ միլիցիա կղխմելիք:

Ապա, յեթե այդպիսի մի դժբախտություն ձեր  
հարեաններից մեկին պատահեր:

Այն ժամանակ դուք միջոցներ ձեռք կառնելիք,  
վոր այդպիսի անտանելի մարդը ձեզ մոտ ել չանցնի:

Յերեվակայեցեք հիմա, վոր դուք պատահամբ  
իմանում եք, վոր այդ «սիրելի» բնակիչները ձեր տունն  
են բերում նաև վառվող նյութեր, նրանք ամեն րոպե  
ձեզ և ձեզ հետ ապրողներին հրդեհի վտանգին են յեն-  
թարկում: Դա կատիպեր ձեզ նրանցից ավելի զգուշա-  
նալու:

Ձեզանից շատերն անվտանգությամբ գլուխ կ'շար  
ժեն և կասեն, թե այդպիսի բան յերբեք չի կարող  
լինել, ուրեմն ինչի մասին ենք խոսում:

Բայց դուք կսխալվեք: Նման դեպքեր լինում են և  
նույնիսկ շատ հաճախ: Դուք դրանում հիմա կ'համոզ-  
վեք: Ճիշտ է, այդ պնդերես բնակիչները թեև մարդիկ  
չեն, այլ վոջիլներ, բայց դրանով գործը չի փոխվում:

Այն, ինչ վոր խոսեցինք պնդերես բնակիչների  
մասին, դա ճիշտ է և վոջիլների վերաբերմամբ: Նրանք  
անվում են մեր պաշարներով (մեր արյունով), խանդա-  
րում են մեր աշխատանքն ու քունը, մեր կյանքին  
վտանգ են սպառնում: Մենք չենք չափազանցնում:  
Կարգացեք այս գրքուկը մինչև վերջը և դուք կ'հա-  
մողվեք:

ՎՈՋԻԼՆԵՐԻ ՅԵՂԵՐԸ:

Վոջիլները բաժանվում են մի քանի ցեղերի: Մի  
տեսակը ապրում է գլխի մազերի մեջ: Դրանք, ալպես  
կոչված, գլխի վոջիլներն են: Մի ուրիշ տեսակը ապ-

ըում է մարմնի այլ մազոս տեղերում, կոնատակին  
(թեվերի տակ), սեռային որգանների շուրջը, մորուքի և  
նունիակ հոնքերի մեջ: Այդ ցեղի վոջիլները կոչվում  
են տափակ վոջիլներ: Այդպես կոչվելու պատճառն այն  
է, վոր նրանց մարմինը լայն է և տափակ: Վերջապես,  
յերրորդ ցեղի վոջիլներն ապրում են հագուստեղենի  
ծալքերի մեջ: Դա հագուստի վոջիլների ցեղն է: Բոլոր  
այդ յերեք ցեղի վոջիլներից ամենախոշորը հագուստի  
վոջիլն է:

ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԻՆՉՈՎ ԵՆ ՍՆՎՈՒՄ ՎՈՋԻԼՆԵՐԸ

Բոլոր յերեք ցեղի վոջիլներն ել բացարձակ ձրիա-  
կերներ են: Նրանք մեր արյունովն են անվում: Վոր-  
պեսզի կարողանա մեր արյունը ծծել, վոջիլն իր քնձ-  
թով (քթով) ծակում է մեր մորթը և այդ միջոցով  
առաջ բերած վերքից ծծում մեր արյունը: Լավ կշտա  
նալուց հետո, հագուստի վոջիլը սպիտակեղենի կամ  
հագուստեղենի ծալքերն է անցնում, գլխավոջիլը ակա-  
ջների հետև կամ մի ուրիշ, հանգիստ անկյուն:

Վորոշ մարդկանց նման, վոջիլներն ել յերբեմն  
շատակեր են լինում: Յեթե վոջիլը չափազանց շաա  
արյուն է ծծել, նրա ստամոքսը պատուվում է, իսկ  
ինքը սատկում:

Վոջիլները կծելու ժամանակ իրենց թքից մի քիչ  
թողնում են վերքի մեջ: Այդ թուքը թունավոր է: Դրա  
նից մորթը կոշտանում է: Կծած տեղերը թուքից ներ-  
կվում են մուլթ գույնով և մորթու այդ մուլթ բծերով  
մենք զանում ենք վոջիլների հետքերը:

Վոջիլները կարող են յերկար ժամանակ առանց սն-  
նդի դիմանալ, մանավանդ, քիչթե շատ գով տեղում: Վո-  
ջիլներին սովամահ անելու համար այդ հարկավոր է  
իմանալ: Ընդհանրապես, կարելի յե համարել, վոր վոջ-  
լոս զգեստներն յերեք շաբաթ լավ փակված արկղում

պահելուց հետո, նրա միջի բոլոր վոշիլները, նույն թվում նաև անիծից (վոշիլի հունտը) առաջ յեկածնե-  
րը սատկում են:

### ՎՈՋԻԼՆԵՐԻ ԱՐԳԱՍԱՎՈՐՈՒՅՅՈՒՆԸ (ПЛОДОВИТОСТЬ)

Ի դժբախտութիւն մեզ վոշիլները շատ արգասա-  
վոր են: Բաւական է վոր վրադ մի վոշիլ հայտնվի,  
կարճ ժամանակում նրանցից դժվար թե արգատվես:

Գլխի վոշիլը ապրում է մի ամիս, իսկ հագուստի  
վոշիլը մոտ յերկու ամիս:

Գլխի վոշիլի եզը իր կարճատեւ կյանքում ածոււմ  
է մոտ 150 ձու, այսպես կոչված անիծներ: Հանգու-  
տի վոշիլը ածոււմ է մոտ 300 անիծ: Գլխավոշիլի անիծ-  
ները սոսնձանյութով (клеяка) կպչում են գլխի  
մազերին, իսկ հագուստի վոշիլներինը կերպասի թե-  
լին: 7-10 որ հետո անիծները թրթուրներ են դառնում,  
վորոնք արդեն կարող են արյուն ծծել: Իսկ մի քանի  
որ ել անց, այդ թրթուրները դառնում են մանր վոշիլ-  
ներ, վորոնք սկսում են նույնպես արագ բազմանալ:  
Այսպիսի արգասավորումով մի ամսվա ընթացքում,  
հաշվելով յերեք սերունդ, մի վոշիլը չորս հազար վոշ-  
իլից ավելի սերունդ է տալիս: Յերևակայեք, յեթե  
մարդ իր վրայի վոշիլները չմաքրի, ինչքան վոշիլներ  
կ'հավաքվեն:

Վերջին պատերազմի ժամանակ գերմանացիք մի  
դերի ընկած ուս զինվորի վրայից հավաքել են տասն  
և ութը հազար վոշիլ:

Վորպեսզի ստուշե, թե ինչքան արագ են բազմա-  
նում վոշիլները, մի գիտնական հետևյալ փորձն է  
արել:

Մի մետաքս կտորից կարված, փոքրիկ տոպրակի  
մեջ դրել է յերկու վոշիլ, տոպրակի բերանը պինդ  
կապելով, մի թելով կախել է վրից:

Վոշիլներին այնտեղ տաք և հարմար է յեղել: Յեր  
կու ամիս հետո տոպրակը լիքն է յեղել վոշիլով: Հաշ-  
վելով, նրա միջից դուրս է բերել 20 հազար վոշիլ:

Քանի վոր այդ աներես միջասներն այդքան  
արգասավոր են, հարկավոր է միջոցներ ձեռք առնել և  
զգուշանալ նրանցից:

### ՎՈՋԻԼՆԵՐԸ ՅԵՎ ՀՈՏԵՐԸ

Վաղուց նկատված է, վոր վոշիլները վորոշ հոտեր  
չեն սիրում և խուսափում են նրանցից, վոշիլների  
համար այդպիսի անհաճո հոտ ունի՝ նավթը, ձուլթը,  
նավթալինը և դեռ շատ ուրիշ բաներ: Վերջին բժավոր  
տիֆի համաճարակի ժամանակ, փորձեր արվեցին այդ  
հոտերով վոշիլներին հալածելու:

Իժբախտաբար, ամեն ժամանակ չի հաջողվում  
անհաճո հոտերով վոշիլներին հալածել:

Սոված վոշիլները վոշ մի հոտից չեն փախչում,  
դրա համար ել չի կարելի հույս դնել այդպիսի միջոց-  
ներով վոշիլներից պահպանվելու վրա:

Վոշիլներն յերևի ունեն իրենց սիրելի և հրապու-  
րիչ հոտերը:

Արվել է հետևյալ փորձը: Սեղանի շուրջ նստել  
ան մի քանի մարդ: Սեղանի մեջտեղը դրել են մի վո-  
շիլ, բոլոր նստածներից հավասար հեռավորութեան  
վրա: Վոշիլը շարժվել է սեղանի շուրջը նստողների  
մեկի ուղղութեամբ: Հետո, սեղանի շուրջը նստողները  
փոխել են իրենց տեղերը: Վոշիլը նորից դրել են սե-  
ղանի մեջտեղը, և նա, նորից շարժվել է նույն մարդու  
կողմը: Սեղանի շուրջը նստողները այդպես մի քանի  
անգամ փոխել են իրենց տեղերը և վոշիլն ամեն ան-  
գամ շարժվել է նույն մարդու կողմը:

Այդ բացատրել են նրանով, վոր այդ մարդու  
հոտը զուր է յեկել վոշիլին:

Յեւնելով նրանից, վոր վոջիւններն ախորժակով սողում են անմաքրասեր մարդկանց վրա, կարելի յե յենթազրել, վոր վոջիւններին հրապուրում ե հենց այդպիսի մարդկանցից դուրս յեկող հոտը:

Գրտինքի, կեղտի և մարդկային մարմնից շոգիացող զանազան հոտերի խառնուրդն ե, յերևի, վոջիւնների ամենասիրած հոտերից մեկը: Իսկ քանի վոր անմաքրասեր մարդիկ հաճախ չեն փոխում սպիտակեղենը (փոխնորդ), չեն լվացվում և չեն լողանում, վոջիւնները վոչ միայն նրանց վրա ապրում, այլև շատ հանգիստ և արագ բազմանում են: Նրանց վոչ վոք չի անհանգստացնում և նրանք կարող են հանգիստ արգասավորվել, բազմանալ: Հենց այնտեղ ե նրանց յերջանիկ կյանքը:

### ՈԳՏԱԿԱՐ ԵՆ ԱՐԴՅՈՔ ՎՈՋԻՆՆԵՐԸ

Ինչքան ել զարմանալի լինի, բայց կան մարդիկ, վորոնք համարում են, վոր վոջիւնները ոգտակար են այն մարդուն, վորի վրա նրանք ապրում են: Տգետ կանայք, որինակ, համարում են, վոր վոջուտ գլխի մագերը ավելի լավ են աճում: Չինական բնակչության անկուրտուրական խավերում համարում են, վոր ամեն մի առողջ մարդու վրա անպատճառ պետք ե վոջիւններ լինեն. յեթե մարդու վրա վոջիլ չկա, ուրեմն այդ մարդը հիվանդ ե:

Մի ճանապարհորդ, որինակ, պատմում ե այսպիսի մի դեպքի մասին:

Մի ունեվոր, բայց տգետ չինացի տվել ե իր վորդուն մի յեվրոպացու մոտ կրթվելու: Այդ յեվրոպացի բնատանիքը կուլտուրական ե յեղել: Չինացի տղին լողացրել են, մաքրել են և նոր շորեր հագցրել: Նրան պահում եյին մաքուր և վրան վոջիլ չկար: Վորոչ ժամանակ հետո տղի հայրը գալիս ե իր վորդուն այցե-

լելու: Տեսնելով, վոր տղի վրա վոջիւններ չկան, նա սարսափում ե: Նրա կարծիքով, վոջիւնների բացակայությունն սպացուցում եր, թե տղան հիվանդ ե: Վախեցած հայրը վերցնում ե տղային և տուն տանում: Վոչ մի համոզում չի ոգնում:

Կարիք ել չկա ասելու, թե այդպես մտածելը, դա անտիպաշտություն ե: Վոջիւններից ինչ ոգուտ կարող ե լինել, քանի վոր նրանք մեզ կծում են և մեր արյունով ապրում: Իսկ թե ինչքան ե արյունը մարդու համար թանգ, այդ ամեն մարդ գիտե:

Պարզ ե, վոր վոջուտ գլխի մագերն ավելի լավ չեն կարող աճել, քանի վոր մագերի աճման համար հարկավոր արյունով ե, վոր վոջիւնները սնվում են:

Մարդու վրա վոջիւնների ներկայությունը վոչ թե նշան ե նրա առողջության, այլ միմիայն՝ անմաքրասիրության:

Այդպիսով մարդու համար վոջիւնների ոգտակարության մասին ավելորդ ե նույնիսկ խոսելը: Բացի դրանից, վոջիւնները վոչ միայն ոգտակար չեն մարդուս, այլ ուղղակի վնասակար:

### ՎՈՋԻՆՆԵՐԻ ՎՆԱՍԸ

Չխոսենք նաև նրա մասին, թե ինչքան են անհանգստացնում և անհաճո յե վոջիւնների կծելն ու մարմնի վրա սողալը: Նրանք ստիպում են մարդուն ցերեկները, քերվելու համար, աշխատանքից պոկվել, իսկ գիշերները հանգիստ չեն տալիս քնելու:

Բայց վոջուտությունը վոչ միայն անհաճո յե, այլ ե մարդու առողջության համար վնասակար:

Նախ՝ վոջիլի թուլութունավոր ե: Նա վոչ միայն մորթին կոշտացնում ե, այլ հաճախ ջերմի պատճառ ելինում:

Յերկրորդ, անհանգիստ քնի, օրրի և արյան կորստի հետեվանքով վոջուտ մարդիկ զղային, դժգույն յեվ սակավարյուն են դառնում:

Յերրորդ, քորը ստիպում է վոլյոտ մարդուն մինչև արյուն գուրս դալը քորել մորթի: Այդ քորից մորթի վրա գոյանում են ուռեցքներ և այլ բորբոքումներ: Մորթու այդ բորբոքումները կարող են շատ ծանր լինել:

Բայց վոլիլների ամենամեծ վտանգը նրանումն է, վոր նրանք բժավոր (сыпной тип) և անդրադարձ տիֆի (возвратный тип) տարածողներն են:

### ՎՈՋԻԼՆԵՐԸ ՎՈՐՊԵՄ ԲԾԱՎՈՐ ՅԵՎ ԱՆԴՐԱԴԱՐՁ ՏԻՓԻ ՏԱՐԱԾՈՂՆԵՐ

Ո՞վ չի լսել մեզանում, ԽՍՀՄ-ում այդ հիվանդությունների մասին: Վերջին համաճարակի ժամանակ մեզնից վճրի վորեվե մոտիկ բարեկամին կամ ազգականին չի տարել բժավոր տիֆը: Իսկ մեզանից արդյոք շատերն են, վոր չեն հիվանդացել այդ տիֆերից մեկով, կամ հենց յերկու տեսակովն էլ:

Ընդհանրապես, մեզնում այդ տիֆերը նորություն չեն: Շատ դարերից իվեր, ցարիզմի ժամանակ, բժավոր տիֆը շատ մարդկային զոհեր էր տանում:

Յերբ նա սովահար վայրերում հնձում էր մարդկանց, նրան «սովի» տիֆ էյին անվանում: Յերբ նա ցարական բանտերում, բանտարկյալների միջից հնձում էր մարդկանց, նրան «բանտի» տիֆ էյին անվանում: Վոր նա պատերազմի ժամանակ հայտնվեց բանակի մեջ, նրան «զինվորական» տիֆ էյին անվանում:

Չանազան անունների տակ, բայց նա յեղել է նույն տիֆը: Ամենից ճիշտ կլիներ նրան «կեղտի» տիֆ անվանել, վորովհետև նրան վոչ պատերազմը և վոչ էլ սովն են առաջ բերել: Նա հայտնվել և հայտնվում է այնտեղ, վորտեղ մարդիկ խիտ, կուտակված և կեղտոտ են ապրում:

Բայց, չնայած բոլոր ջանքերին, յերկար տարիներ չեր հաջողվում հայտնաբերել, թե ի՞նչ ճանապարհով

է բժավոր և անդրադարձ տիֆը մեկից մյուսին անցնում և տարածվում: Յեվ միմիայն գրեթե վերջերս պարզվեց, վոր այդ յերկու տիֆերի տարածողները վոլիլներն են:

Այն ժամանակ միայն պարզվեց, թե ինչու այդ տիֆերը գլխավորապես պատերազմի և սովի նման հասարակական աղետների ժամանակ են մարդկային մեծ զոհեր տալիս, վորովհետև հենց այդպիսի աղետների ժամանակ են մարդիկ ավելի կուտակված և կեղտոտ ապրում:

Այդպիսով, պարզվել է, վոր այդ զգվելի, ձանձրացուցիչ միջատը, այդ մեր արյունով սնվող պարազիտը՝ վոլիլը՝ տարածում է նաև բժավոր և անդրադարձ տիֆերը:

Մեր ժամանակներում նույնիսկ ավելորդ է խոսել, թե ինչքան վտանգավոր են բժավոր և անդրադարձ տիֆերը: Բոլորին հայտնի յե, թե այդ հիվանդություններից ինչքան շատ մարդիկ են մեռնում: Նույնպես շատերին հայտնի յե, թե այդ հիվանդությունները տարած մարդկանց սիրտը, հաճախ մինչև նրանց կյանքի վերջը, լինում է թույլ և հիվանդ: Լինում է և շատ հաճախ, վոր այդ հիվանդություններից հետո տեսողությունը (աչքերը) փչանում է, անբուժելի վնասվում: Մի խոսքով, այդ հիվանդություններն առողջության և նույնիսկ կյանքի համար շատ վտանգավոր են: Ահա այդ վտանգավոր հիվանդություններն են տարածում վոլիլները:

### ԻՆՉՊԵՍ ԵՆ ՎՈՋԻԼՆԵՐԸ ԲԾԱՎՈՐ ՅԵՎ ԱՆԴՐԱԴԱՐՁ ՏԻՓԵՐԸ ՏԱՐԱԾՈՒՄ

Բժավոր և անդրադարձ տիֆերը վարակիչ հիվանդություններ են: Բոլոր վարակիչ հիվանդությունների նման, նրանք էլ առաջանում են կենդանի վարակի մանրէների (միկրոբների) մոջոցով:

Մանրենները կենդանի եյակներ են: Նրանք այն-  
քան մանր են, վոր նույնիսկ ամենասուր աչքով չի  
կարելի նրանց տեսնել: Նրանց գոյության մասին իմա-  
ցել են միմիայն խոշորացուցց ապակու գլուտից հետո,  
վորի միջոցով մենք ամեն ինչ մի քանի հարյուր, նույն-  
իսկ մի քանի հազար անգամ մեծացած ենք տեսնում:

Բժավոր և անդրադարձ տիֆի վարակն ապրում է  
այդ տիֆերով հիվանդների արյան մեջ: Յերբ վոջիլը  
ծծում է հիվանդի արյունը, այդ արյան հետ միասին  
նա կուլ է տալիս նաև բժավոր կամ անդրադարձ տիֆի-  
(նայած թե վոր տիֆով է հիվանդը) վարակը:

Արյան հետ միասին կուլ տրված վարակը մնում է  
վոջիլների մեջ (բժավոր տիֆի դեպքում մինչև մահը,  
անդրադարձ տիֆի դեպքում՝ 10-12 օր) և դրանց մի-  
ջոցով ուղղակի փոխադրվում է առողջ մարդկանց ար-  
յան մեջ: Այդ լինում է կամ կծելու և կամ թե վոջիլն  
մարմնի վրա ճգմելով: Վերջին դեպքում վարակն արյան  
մեջ է անցնում մարմնի վրա քորելուց առաջացած վեր-  
քերից: Վարակը մարդու արյան մեջ մտնելով, սկսում  
է բազմանալ: Իսկ յերբ նա բավականին բազմանում է,  
մարդն էլ հիվանդանում է տիֆով:

Բժավոր և անդրադարձ տիֆերն, ըստ յերեվոյթին,  
տարածում են վոչ միայն հագուստի վոջիլներն, այլ և  
գլխի վոջիլները:

Ահա թե մեզ համար ինչքան վտանգավոր են այդ  
պնդերես բնակիչները:

### ՎՈՋԻԼՆԵՐԸ ՎՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՋԸՆԴՈՏ

Ուրեմն վոջիլները մեզնից ամեն մեկի առողջության  
և նույնիսկ կյանքին վտանգ են սպառնում:

Մենք կառուցվող սոցիալիզմի պետության մեջ  
ենք ապրում: Մեր ույժերը, մեր առողջությունը, մեր

կյանքը հարկավոր են յերկրի արագ ինդուստրացման,  
գյուղատնտեսության կոլեկտիվացման, սոցիալիստա-  
կան շինարարության գործին:

Աշխատավորության առողջության քայքայելով, սո-  
ցիալիզմի համար պայքարող մարտիկների շարքերը  
նոսրացնելով, վոջիլները, այդ կեղտի և անկուտուրա-  
կանության ուղեկիցները՝ ուղղակի մեր, դեպի կուլտու-  
րական կյանք, դեպի սոցիալիզմ սանող ճանապարհին  
խոչընդոտ են հանդիսանում:

Վլադիմիր Իլիչ Լենինը դեռ հեղափոխության ա-  
ռաջին տարիներում ասել է, թե կամ վոջիլը պիտի  
հաղթե սոցիալիզմին, կամ սոցիալիզմը՝ վոջիլին:

Մնցել է 14 տարի: Մենք այդ ժամանակամիջո-  
ցում զգալի չափով արդեն վերացրել ենք նոր կյանք  
կառուցելու մեզ խանգարող թշվառությունն ու ավերը:

Բայց դեռ վերջնականապես չենք վերացրել մեր  
անգրագիտությունը, մեր սանիտարական անկուտու-  
րականությունը:

Դա, այժմ էլ մեզ խանգարում է մեր սոցիալիս-  
տական շինարարության մեջ:

Այդ խոչընդոտները մենք պարտավոր ենք շատ  
շտապ կարգով վերացնել: Վոջիլների դեմ պայքարելով,  
մենք պարտավոր ենք հիշել, վոր այդ պայքարը, վոչ  
միայն բժավոր և անդրադարձ տիֆերի դեմ է, այլ,  
միևնույն ժամանակ, պայքար է նաև մաքրության,  
կուլտուրական կյանքի, սոցիալիզմի համար:

### ԻՆՉՊԵՍ ՊԱՅՔԱՐԵԼ ՎՈՋԻԼՆԵՐԻ ԴԵՍ

Մենք արդեն ասացինք, թե ավելի լավ է չթողնել  
վոր վոջիլը հաստատվի մեր գլխին կամ զգեստների մեջ:

Դրա ամենալավ միջոցն է մաքրասիրությունը:  
Մաքրասեր մարդկանց վոչ գլխին և վոչ էլ զգեստների  
վրա դուր վոջիլներ չեք գտնի: Յեթե մաքրասեր մար-

դու վրա պատահմամբ ել մի վոջիլ ընկնի, նա այնտեղ յերկար չի ապրի:

Հենց մեկ անգամ գլուխը լվանալով, կամ սպիտակեղենը փոխելով, նա հեռացվում է: Դրա համար հարկավոր է ամեն շաբաթ փոխնորդը փոխել և տաք ջրով ու ոճառով մարմինը լվանալ:

Իհարկե ամենից հարմարն է բաշխվելով լվացվել, իսկ սպիտակեղենը՝ լվացքատնում լվանալ: Բայց, դժբախտաբար, գլուղերից դեռ շատերը բաղնիքներ և լվացքատներ չունեն:

Բացի դրանից, մարմնի և սպիտակեղենի մաքրությունը մեզ վոջ միայն վոջիլներից և նրանցից տարածվող տիֆերից է պահպանում, այլև քոսից և այլ հիվանդություններից, և ընդհանրապես, ամրացնում է մեր առողջությունը:

Գլուղացիները պե՛ս է միջոցների դիմեն, վորպեսզի ամեն մի կոլոնիստություն ունենա իր լավ սարքաված հասարակական բաղնիքն ու լվացքատներ:

Հասարակական բաղնիքի կազմակերպումը, դա կոլոնիստություն համար սանիտարական միջնամուկի պահանջներից մեկն է:

Բայց մաքրասիրություն պահպանելը հարկավոր է նաև բաղնիք և լվացքատուն չունենալու դեպքում, միայն իհարկե, այդ կլինի ավելի դժվար և ծանր:

Վոջիլներին վորպես պատսպարան ծառայող, անմաքրասեր մարդկանց գլուխը պետք է լվացվի շաբաթը յերկու անգամից վոջ պակաս և խիտ սանրով խնամքով սանրվի:

Զգեստները հարկավոր է ավելի հաճախ մաքրել և հողմահարել (բաց ողի հանել):

Յեթե պատահմամբ, աննկատելի կերպով ընկած մի վոջիլ հաջողել է բաղմանալ, առանց վորեվ ջանք խնայելու, հարկավոր է մաքրվել այդ անտանելի և վտանգավոր բնակիչներից:

Իլիսի վոջիլներ հայտնվելուն պես, հարկավոր է գլուխը նավթով թրջել և կես ժամով թաշկինակով կապել: Նավթը վոջիլներին շմեցնում է: Դրանից հետո հարկավոր է տաք ջրով և ոճառով գլուխը լվանալ և խիտ սանրով սանրել:

Միմիայն այդ միջոցով կարելի չէ վոջիլներին հեռացնել: Իսկ անիծները շատ ամուր են կպած լինում մազերին: Նրանց հեռացնելու համար հարկավոր է մազերը քացախով թրջել: Նրանք այն ժամանակ պոկվում են մազերից և կարելի չէ խիտ սանրով սանրել: Բայց քանի վոր բոլոր անիծներից միանգամից ազատվել չի հաջողվում, հարկավոր է շաբաթը 2—3 անգամ գլուխը սանրել:

Այդպես շարունակում են, մինչև վոր բոլոր վոջիլներն ու անիծներն անհետանան: Յերեխաների հետ ավելի հեշտ է՝ կարելի չէ մազերը կարճ խոզել:

Հագուստի վոջիլները հարկավոր է սափաքյալ վոջնչացնել: Վոջիլները ցրտից միայն նվազում են, իսկ տաքին նորից կենդանանում:

Վոջուտ սպիտակեղենը հարկավոր է մի ժամ մոխրաջրի (щелок) մեջ յեփել: Դրա հետ միասին, պիտի հետեվել, վոր մոխրաջրում գտնվող սպիտակեղենը պինդ ծալքերով դարսված չլինի, այլ աղատ, վորպեսզի մոխրաջրը կարողանա անցնել սպիտակեղենի բոլոր ծալքերը:

Վոջուտ զգեստները հարկավոր է ուսական վառարանի մեջ լավ սափացնել: Դրա համար հարկավոր է վառարանը հաց թխելու չափ տաքացնել և զգեստները վառարանի մեջ ազատ դարսել: Հետո վառարանը փակում են և զգեստները թողնում նրա սեղ մեկ ու կես ժամով: Այդ ժամանակամիջոցում վոջիլներն ու անիծները տաքությունից վոջնչանում են: Յեթե ուսական վառարան չկա, կարելի չէ պարզապես շիկացած հարթուկով հարթուկել: Զգեստը ջրով սրսկում են և հար-

Քուկով դանդաղ հարթուկում. դրա հետ միասին, հարթուկը տանել զգեստի բոլոր ծալքերի և կարերի վրայով: Պիտի հիշել, վոր կարի սեղերն ու ծալքերը վոջիլների ամենասիրած անկյուններն են, վորտեղ նրանք դնում են անիծները:

Մեծ քաղաքներում կան մասնավոր ախտահան (дезинфекционные) կամերաներ, վորոնց մեջ զգեստների միջով տաք շոգի կամ ոգ են անցկացնում: Այդ կամերաներում բոլոր վոջիլներն ու անիծները վոջնչանում են: Կոլտանեսուլթյուններում նման կամերաներ հարկավոր ե կազմակերպել հասարակական բաղնիքներին կից: Դա մեղ կոգնի ավելի շուտ վոջնչացնել վոջլոտուլթյունը և դրա հետ միասին նաև բժավոր և անդրադարձ տիֆերի վտանգը:

Պատահում ե, վոր վոջիլները ցրվում են նաև բնակարանում, դրա համար ել հարկավոր ե միջոցներ ձեռք առնել բնակարանի և անկողինների միջից նրանց վոջնչացնելու համար:

Անկողնի սավանների և վերմակների հետ վարվում են նույնպես, ինչպես և զգեստների հետ: Մահճակալներն ու կոյկաները յեռացրած մոխրաջրով են լվանում և նավթով յեռում: Հատակը լվանում են կոշտ մոխրաջրով, իսկ ձեղքերը նավթ են լցնում:

Ավելի ճիշտը՝ բնակարանը ծծումբով (сера) ծխել: Դրանից վոջնչանում են վոջ միայն վոջիլները, այլև՝ լուերը, փայտոջիլները, մկները, յեթե այդպիսիները կան խրճիթում: Այդ հարկավոր ե հմտորեն անել, թե չե, վոջ միայն ոգուտ չի լինի, այլ և կարող ե հրդեհ առաջ գալ: Դրա համար հարկավոր ե դիմել քաղաքամասի կամ գյուղի բժշկին կամ բուժակին:

Տափակ վոջիլներից ազատվելու համար հարկավոր ե բժշկին դիմել դեղ ստանալու համար:

## ՅԵԶՐԱԿԱՑՈՒՅՑՈՒՆ

Հուսով եմ, վոր դուք այժմ համոզվեցիք, թե զբքույկի սկզբում պնդերես բնակիչները (վոջիլների) մասին ասածս իսկական ճշմարտություն ե:

ԱՅԺՄ ԵՆ ԻՆՔՆԵՐԴ ՍՍԱՅԵԲ,

- 1) Կարելի՛յե վոջիլներին պնդերես բնակիչներ անվանել և ինչո՞ւ:
- 2) Վոջիլներն ի՞նչ վնաս են հասցնում մարդուն:
- 3) Վոջիլներն ի՞նչ վտանգավոր հիվանդություններ են տարածում:
- 4) Ինչպե՞ս պահպանվել վոջիլներից:
- 5) Ինչպե՞ս վոջնչացնել գլխի վոջիլները:
- 6) Ինչպե՞ս վոջնչացնել հագուստի վոջիլները:

Ответственный редактор  
М. М. Гигоян  
Техредактор  
Г. М. Маркарян

№ 2271

1932

Сд в наб 11/III—1931 г  
Сд в печать 29/III—1932 г  
Об'ем 1/2 печ листа  
Тираж 1500 экз

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վոջիւների ցեղերը . . . . . 2  
Ինչպես և ինչով են սնվում վոջիւները . . . . . 3  
Վոջիւների արգասավորութիւնը . . . . . 4  
Վոջիւները և հոտերը . . . . . 5  
Ոգտակար են վոջիւները . . . . . 6  
Վոջիւների վնասը . . . . . 7  
Վոջիւները վորպես բծավոր և անդրադարձ տիֆերի տարածող . . . . . 8  
Ինչպես են վոջիւները տարածում բծավոր և անդրադարձ . . . . . 9  
տիֆերը . . . . .  
Վոջիւները վորպես սոց. շինարարութեան խոչընդոտ . . . . . 10  
Ինչպես պայքարել վոջիւների դեմ . . . . . 11  
Յեղրակացութիւն . . . . . 15

<< Ազգային գրադարան



NL0270351

3800

12/25

200

431

900 2 1400 W

D

ИЗДАТЕЛЬСТВО  
ИНСТИТУТА  
ПОПУЛЯРИЗАЦИИ  
Лингвистических Наук  
СССР



На армянском языке

Серия „Здоровый быт в колхозах“  
С. Бахмутская  
НАЗОЙЛИВЫЕ ЖИЛЬЦЫ

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“  
ԳՐԱԳՈՒԼՅՈՒՅԸ  
ՈՍՍՏՈՎ-ԴՈՆ, ՄՈՍԿՈՎԱԿԱՅԻ ՓՈՂ., 53  
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՅԵՆՏՐ)